սրով քէֆիլքն ի վերայ պատրիգին և զհունս ելից ոչ գտանէին և ոչ ոք մերձէր ի նոսա։

Յաւուրս Դեկտեմբերի (ՌՃԹ) հացն նուազ առնէին, վասն որոյ ի թի ետ վէզիրն իբրև արանց Է–ից և Ը–ից, զի զատին ընդդիմանայր եւ երթայր առ փաշան եւ Շատ է, ասէր, նաւ ցորենոյ. եւ օրըստօրէ հացածախք կանխէին ի դրունս նորա և ոչ տայր նարդ ըզբազում աւուրս, մինչ զի և ի սահմանս ուրեք ուրեք զՁ տրամն Բ ըստակ տային, զայն և ի գիշերն ցըրէին, որ տկարք և անզօրք անօթի մնային։ Եւ արքն որ գնային ի գնել՝ կոխէին զփուռս և ի միմեանց յափըշտակէին, նա և ի բռնաւորաց մարդ եգեալ ի հացածախք՝ զի նոքա ...խէին և ոչ ... այնու լի...։ Իսկ յազդմանէն Աստուծոյ ԺԱ. Դեկտեմբերի ելեալ վէզիր ի ղօլ և զբազումս գանելով երթայ և մտանէ ի Ղափանն և տեսանէ անդ զամենայն բեռինս, որ ոչ լինի յաւել քան զԳՃ, զոր ասեն թէ իմարէթիցն է, եւ այն նա եւ այլն ֆոտոլային և Բ Գ նաւ և ՃԿ ըստակ գին. վասն որոյ ետ նարդ ՃԿ տրամ Բ ըստակ, և ապա սակաւ սակաւ յաւուրսն բազմանայր։ Եւ յետ աւուրց քանի սղէր ցորեանն՝ նաև նուազէր հացն։ Նաև փոխեցին զզատին Զըհքի Ի ամսոյ և եդին զոմն ծեր, որ հօճէթ արարին սպանման Թումային։ Եւ յաւուրս կաղանդի ՃԿ տրամ արարին, զի եւ հրաման ետուն այրելոյ փռանց՝ զի ի տեղիս տեղիս չինեալ տեարքն բացին և հանին հաց ՃՁ ըստակ գարին, բամպակն և կորեկն։

Յաւուրս եկն տօնանմա Սպիտակ Ծովէ ԺԵ նաւուք ղափուտան Սլի փաշայիւ, որ եւ ի պակասութենէ նաւուցն եդին ԳՃ հիւսն ճարտարաց գործողաց զի զնաւս բազումս չինեսցեն անդ ի Թէրսխանէ։ Նաև